ԲԱՀԱՅԻԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՌԵԱԿՑԻՈՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

Իրանում XIX դ. կեսերին կրոնական քողի տակ ծավալվել էր հակաֆեոդալական մի շարժում, որն ընդունել էր իր ղեկավարի՝ Բաբի անունը։ Իշխանությունները և շիական հոգևոր ղեկավարները արյունոտ դատաստան տեսան բաբիական շարժման հետ և ճնշեցին այն։

Եթե շահի ղորքերը այդ ժողովրդական շարժումը ճնշեցին ֆիզիկապես, ապա հետագայում կոմպրադորները այն կազմալուծեցին գաղափարապես, նրանից դուրս նետելով հակագաղութային և հակաֆեոդալական գաղափարները։

Ստեղծվեց բուրժուական մի ուսմունք, որը պաշտպանում էր մասնավոր սեփականությունը, սոցիալական անհավասարությունը, դատապարտում իշխող դասակարգի դեմ ամեն տեսակի ելույթները, ժխտում ազգային և քաղաքական անկախության սկզբունքները և առաջ քաշում ազգային պատնեշների վերացման, «միացյալ համաշխարհային պետություն» ու աշխարհի ժողովուրդների փոխադարձ հաղորդակցության պատրվակով մի լեզու ստեղծելու և իմպերիալիզմին ձեռնտու այլ գաղափարներ։

Իրանի կոմպրադորական բուրժուազիայի և գաղութարարների շահերն արտահայտող այս ուսմունքը ստացավ բահայիզմ անվանումը։

Աղգային շահերին դավաճանելը, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, բուրժուազիային հատուկ քաղաքականություն է. «...Երբ գործը հասնում է տնտեսական իշխանության, շահագործողների իշխանության հիմունքներին, նրանց սեփականությանը...,— գրում է Վ. Ի. Լենինը,— նրանք մոռանում են հայրենիքի և անկախության նկատմամբ տածած սիրո իրենց ֆրազները..., երբ խնդիրը վերաբերում է դասակարգային շահույթներին, բուրժուազիան հայրենիքը վաճառում է և իր ժողովրդի դեմ ուղղված չարչիական գործարքներ է կնքում ամեն տեսակի օտարերկրացիների հետ...»[1]։

Բահայիզմի հիմնադիր Բահա-ուլլահը եղել է Բաբի աշակերտներից և հետևորդներից մեկը։ Նա ծնվել է 1817 թ. մեծահարուստի ընտանիքում։ 1852 թ. բաբիների ազանգի հետապնդման շրջանում նա նույնպես ձերբակալվում է։ Բահա-ուլլահի և մի քանի այլ բաբիների հարցաքննման գործը վարում էր մեծ վեզիր Միրզա Աղա խանը։ Ամբողջ երկրով մեկ ամենադաժան դատաստանն են տեսնում Բաբի հետևորդների հետ, որը տեղի է տալիս բազմաթիվ կամայականությունների[2]։ *Բազմաթիվ մարդիկ, որոնց թիվը, ըստ պաշտոնական աղբյուրների, հասնում էր տաս հազարի*[3] *և որոնց մեծամասնությունը անգամ ոչ մի առնչություն չուներ բաբիների հետ, տանջամահ եղան, իսկ Բահա-ուլլա-*

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 12—13։

[2] مهدی ملك زاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران، ۱۳۲۸، ص ۱۶۷

[3] Տե՛ս И. Даров, Бехаизм, М.. 1930, стр. 22.

հը ռուսական դեսպանի և իր ազդեցիկ ազգականների միջնորդությամբ 1852 թ. աշնանը[4] ազատվում է բանտից և իր ընտանիքի ու մի խումբ հետևորդների հետ ուխտագնացության պատրվակով մեկնում Բաղդադ[5]։

Բահա-ուլլահի նկատմամբ Իրանում ցարական Ռուսաստանի ներկայացուցչի ցուցաբերած ուշադրությունն ու հովանավորությունը, այնուհետև Բաղդադ տեղափոխվելուց հետո նրան անգլիական հպատակ դարձնելու համար անգլիական գլխավոր հյուպատոսի գործադրած ջանքերը[6], իտալական հյուպատոսի ուշադրությունը[7] և այլ փաստեր, իհարկե, պատահական չէին։

Բահա-ուլլահը երախտագիտությամբ է հիշում ցարական Ռուսաստանի ներկայացուցիչների վերաբերմունքը իր նկատմամբ. «Երբ ես գտնվում էի զնդանում՝ կապանքների ու շղթաների տակ, քո դեսպանորդներից մեկը ինձ օգնություն ցույց տվեց»,— գրում էր նա Նիկոլայ I ցարին[8]։

Հետագա փաստերն ավելի պարզորոշ են բացահայտում ցարական իշխանության համակրանքը Բահա-ուլլահի նկատմամբ։ Համաձայն Բահա-ուլլահի ազգական Սոբհիի հաղորդման, բահայիները Իրանի տարբեր ծայրամասերից մեծ խմբերով տեղափոխվում են անդրկասպյան մարգեր, որտեղ ցարական Ռուսաստանի տեղական իշխանությունները նրանց ապաստան և գործունեության բացարձակ ազատություն են տալիս[9]։ Բահայիզմի քարոզիչները Մերձավոր Արևելքից հաճախ գալիս էին Ռուսաստան և աշխատանք ծավալում այդ ուսմունքի տարածման ուղղությամբ։ Մյուս կողմից, ուղղափառ միսիոներները և ռուս արևելագետները ուսումնասիրում էին բահայիզմը, հավաքում ձեռագրեր, վավերագրեր, հրատարակում աշխատություններ շարժման մասին[10]։

Ցարական Ռուսաստանը և Անգլիան դեռևս այդ ուսմունքի կազմավորման սկզբնական շրջանում, հանձինս Բահա-ուլլահի և նրա հետևորդների տեսնում էին Արևելքում, հատկապես Իրանում, իրենց նպատակներին հասնելու լավագույն հենարանը։

Բաբի ամենանվիրված աշակերտներից և հետևորդներից էր Միրզա Յահիան՝ Բահա-ուլլահի կրտսեր (խորթ) եղբայրը, որին հետագայում Բաբը տալիս է Սոբհե Ազալ՝ «հավերժության առավոտ» մականունը[11] և իր մահապատժից առաջ (1850 թ. գարնանը) իրեն փոխարինող նշանակում։

Ինչպես հաղորդում է Միրզա Ջանի Քաշանին[12], այդ որոշման իսկությու-

---

[4] بررسی و محکمه در تاریخ عقائد و احکام باب و بهاء، تهران، ۱۳۲٤، جلده ۱، ص ۱۰۱

Տե՛ս նաև Е. Бертельс, Бехаит об истории беханзма, „Восток", М.—Л., 1925, кн. 5, стр. 203.

[5] Ատրպետ, Իմամաթ, Ալեքսանդրապոլ, 1906, էջ 94։

[6] Տե՛ս Е. Бертельс, Бехаит об истории беханзма, „Восток", кн. 5, М.—Л., 1925, стр. 203.

[7] И. Даров, Беханзм, стр. 54—55.

[8] А. М. Аршаруни, Бехаизм, М., 1930, стр. 8.

[9] صبحی فضل اله مهتدی، پیام بدر، تهران، ۱۳۳٤، ص ٤۷

[10] А. М. Аршаруни, Бехаизм, стр. 9.

[11] Հ. Առաքելյան, Բաբիականությունը Պարսկաստանում («Մուրճ», 1901, № 2, էջ 98)։

[12] Սա հեղինակն է «Նողթաթուլ-Քաֆ» (کتاب نقطة الکاف فی تاریخ بابیه) Յգրքի, որը բաբիական շարժման վերաբերյալ միակ հավաստի աղբյուրն է և գրվել է 1850—

նր հաստատելու համար Բաբը Սոբհե Ազալին է ուղարկում իր գրչատուփը, թղթերն ու աշխատությունները, զգեստը, կնիքը և այլ իրեր։ Նա Սոբհե Ազալին նաև վստահում է կառավարել բաբիական համայնքը և գրել ու լրացնել «Բայանի»[13] (հայտնություն), անավարտ թողած ութ կետերը։ Բաբը գրում է նրան. «Եթե Ման յաղհարահ ալլահ[14] կհայտնվի քո ժամանակաշրջանում, ապա վերափոխիր Բայանը և կիրառիր այն գործնականում»[15]։ Այսպիսով, Միրզա Ջանին իր ընթերցողներին հուշում է, որ Բաբը գիտակցաբար էր կիսավարտ թողել «Բայանը», որպեսզի հաջորդ ութ կետերը լրացներ և ավարտեր Սոբհե Ազալը։ Դրանով նա կամենում էր հավատացնել, որ ալլահի խոսքը մեկն է։ Դա ինքնըստինքյան այն ամենամեծ փաստարկն է, որի համաձայն Բաբին կարող էր փոխարինել միայն և միայն Սոբհե Ազալը և ուրիշ ոչ ոք, քանի որ միևնույն ժամանակ չեն կարող լինել երկու առաջնորդներ»[16]։

Բաբի մահապատժից հետո Սոբհե Ազալը Թեհրանում և Մազանդարան նահանգի Նուր բնակավայրում ուսումնասիրում էր Բաբի ուսմունքը։ Երբ 1852 թ. օգոստոսի 16-ին Թեհրանում բաբիականները Նասեր էդ-Դին շահի դեմ անհաջող մահափորձ կատարեցին, Սոբհե Ազալը գտնվում էր Նուրում։ Իրանական իշխանությունները նրան ձերբակալողին հազար թուման գումար են խոստանում, բայց Սոբհե Ազալը դերվիշի հագուստով, ծպտյալ կարողանում է փախչել։ Նա անցնում է Իրանի սահմանը և 1852 թ. վերջերին կամ 1853 թ. սկզբներին հասնում Բաղդադ[17]։ Իսկ նրա եղբայրը՝ Բահա-ուլլահը, ինչպես նշեցինք, բանտից ազատվելով, Բաղդադում միանում է Սոբհե Ազալին։ Այնուհետև Բաբի բազմաթիվ հետևորդներ Իրանի տարբեր ծայրամասերից գալիս են Բաղդադ և այն դարձնում իրենց կենտրոնը։ Մինչև 1863 թ., տաս տարի շարունակ, նրանք մնում են արաբական Իրաքում։

Ինչպես վկայում են պատմական աղբյուրները, այդ թվում և հենց Բահա-ուլլահի աշխատությունները, այդ ժամանակ նա ենթարկվում էր Սոբհե Ազալին։ Սակայն 1862 թ. Բահա-ուլլահը որոշ ինքնուրույնություն է դրսևորում։

Այդ ժամանակվանից սկսած բաբիական համայնքի ղեկավարման հարցում երկու եղբայրների միջև խիստ բախումներ են տեղի ունենում։ Դա հանգեցնում է բաբիականների պառակտմանը։ Քարբելա և Նաջաֆ սրբավայրերի բարձրաստիճան հոգևորականները, օգտվելով առիթից, բահայիների և մուսուլմանների միջև հաճախակի բախումները մատնանշելով՝ խրստորեն բողոքում են և պահանջում բաբիականներին հեռացնել Բաղդադից։

1852 թթ.։ Գրքի ձեռագիրը, որը պահպանվում է Փարիզի Ազգային գրադարանում, 1910 թ. հրատարակել է Բրաունը։ Իսկ ըստ Աբբաս էֆենդիի հաղորդման, Բաբն իր գրությունները և իրերը ուղարկել է Բահա-ուլլահին և նրան է նշանակել իրեն փոխարինող։ Տե՛ս شخصی سیاح՝ مقاله էջ 52—53։

13 «Բայան»—բաբիների սուրբ գիրքը, որը գրել է Բաբը 1847 թ. և ըստ հեղինակի պետք է փոխարիներ Ղուրանին։

14 من يظهره الله — «այն, որին կհայտնի ալլահը»—այդպես է անվանել Բաբը գալիք մարգարեին։

15 كتاب نقطة الكاف، ص ٢٢٤

16 Նույն տեղում։

17 كتاب نقطة الكاف، ص لح، لط

Բացի դրանից, 1864 թ. իրանական կառավարությունը Ստամբուլում իր դեսպան Միրզա Հոսեյն խան Մոշիր օլ-Դովլեյին կարգադրում է, որպեսզի նա խնդրի օսմանյան իշխանություններին այդ կրոնական համայնքը Իրանի սահմաններից հեռացնելու մասին։ Օսմանյան կառավարությունը, ընդառաջելով հոգևորականության և Իրանի կառավարության պահանջին, բաբիականներին տեղափոխում է Ստամբուլ, իսկ չորս ամիս անց, մոտավորապես 1864 թ. դեկտեմբերին[18] խալիֆի հատուկ հրովարտակով նրանց աքսորում են Ադրիանապոլիս[19]։

Ժամանակի ընթացքում բաբիական համայնքի ղեկավարման գործը անցնում է ավելի հմուտ, փորձված և գաղութատիրական պետությունների հովանավորությունը վայելող Բահա-ուլլահին։ Վերջինս իր վաղեմի իղձերն իրականացնելու նպատակով 1867 թ. իրեն հայտարարում է այն նոր մարգարեն, որի հայտնությունը նախագուշակել էր Բաբը։

Այնուհետև Բահա-ուլլահը սկսում է լայն գործունեություն ծավալել։ Իր նոր, հակաազգային, պացիֆիստական ուսմունքը տարածելու նպատակով նա մի շարք հոդվածներ և նամակներ է գրում՝ ուղղված տարբեր երկրների կառավարությունների և առանձին կազմակերպությունների։

Այդ ժամանակաշրջանում է, որ բահայիները լայն գործունեություն են ծավալում բաբիական շարժման վերաբերյալ գրականությունը, հատկապես «Նողթաթուլ-Քաֆ» գիրքը ոչնչացնելու համար։ 1880 թ. բահայիները Միրզա Ջանիի աշխատության սկզբունքների ոգով գրում են «Նոր պատմությունն» (تاریخ جدید) գիրքը, նրա բովանդակությունից դուրս թողնելով իրենց շահերին հակասող դրույթներն ու փաստերը։

Մոտավորապես 1886 թ. լույս է տեսնում բահայիական մի այլ աշխատություն՝ «Ճանապարհորդի պատմվածք» (مقاله شخصی سیاح) խորագրով, որի հեղինակն էր Բահա-ուլլահի որդին՝ Աբբաս էֆենդին։ Այդ գրքում մերժվում էր այն ամենը, ինչ հակասում էր բահայիզմին։

Ադրիանապոլսից Բահա-ուլլահը սկսեց իր պատվիրանները՝ «լոհերը» ուղարկել Միջագետք, Իրան և Հնդկաստան՝ իր հետևորդների մեջ տարածելու համար։ Նա Նասեր-էդ-Դին շահին գրեց մի ընդարձակ նամակ, որտեղ բացատրում էր, որ ինքը և իր վարդապետությունը երբեք աշխարհիկ տիրապետության չեն ձգտում։ Այդ ուսմունքի էությունը, ըստ նրա, մարդկային հոգին, բարքը և կրթությունը կատարելության հասցնելն է։ Բահա-ուլլահը դատապարտում էր բաբիականների հակագաղութային և հակապետական, հեղափոխական նպատակադրությունը և դրսևորում իր նոր կրոնի հանդուրժողականությունը։ Նա իր հետևորդներին խստիվ արգելում էր ոչ միայն որևէ իշխանության դեմ ապստամբել, հակառակվել, պատերազմել և արյուն հեղել, այլև նույնիսկ խոսքով որևէ անհատի վշտացնել՝ ինչ ազգի, ցեղի ու աստիճանի էլ որ նա պատկանի։ Այդ նամակում նա դատապարտում էր Մազանդարանի Շեյխ Թաբարսիի, Զանջանի և Նեյրիզի ապստամբությունները՝ դրանք որակելով որպես բարիների տգիտության արդյունք[20]։

---

18 Տե՛ս كتاب نقطة الكاف، ص ما

19 Ատրպետ, նշվ. աշխ., էջ 101։

20 Նույն տեղում, էջ 102։

Այդ ժամանակաշրջանում բահայիները լայնորեն համագործակցում են անգլիական և ամերիկյան միսիոներների հետ։ Ինչպես հայտնի է, դեռևս 1835 թ. ամերիկյան միսիոներները ներթափանցում են Իրան և լայն գործունեություն ծավալում. բացում դպրոցներ, տեխնիկական ուսուցման կենտրոններ, հիվանդանոցներ, մինչև իսկ տպարան[21]։ Միսիոներները օժանդակում էին բահայիների լոյալ ուսմունքի տարածմանը, քանի որ այն համապատասխանում էր գաղութարարների շահերին։

Բահա-ուլլահի կողմնակիցները Իրանում ու նրա սահմաններից դուրս տեռորիստական լայն գործունեություն են ծավալում։ Նրանց հաջողվում է Բաբի ամենանվիրված հետևորդներին և Սորհե Աղալին հավատարիմ անձանց մեծ մասին շարքից հանել[22]։

Բաբիական համայնքի ներսում ծագած երկպառակությանը վերջ տալու նպատակով օսմանյան կառավարության 1868 թ. հուլիսի 26-ի արձակած հրամանի համաձայն, Սորհե Աղալը իր հետևորդների և Բահա-ուլլահի չորս երկրպագուների հետ միասին պետք է աքսորվեին Կիպրոս կղզու Ֆամագուստա քաղաքը։ Իսկ Բահա-ուլլահը իր ընտանիքի և ութսուն կողմնակիցների հետ աքսորվում է Պաղեստինի Աքքա քաղաքը[23]։

Աքքա ժամանելուց հետո Բահա-ուլլահը մեծ աշխատանք է տանում։ Նա ուղերձներ և ընդարձակ թղթակցություններ է գրում՝ պարզաբանելով և տարածելով իր ուսմունքը բաբիների տարբեր համայնքներում։ Այստեղ 1872 թ. կամ 1873 թ. նա գրում է իր գլխավոր աշխատությունը՝ «Քեթաբե Աղդասը»[24] (Ամենասուրբ գիրք)։ Այդ աշխատությունը պարունակում է 472 այաթ ու պատվիրան և, ըստ հեղինակի, պետք է փոխարիներ «Ղուրանին» և «Բայանին»։

Բահայիզմը նույնպես ընդունում է միաստվածությունը։ Բահա-ուլլահի ուսմունքի համաձայն բոլոր մարդիկ, անկախ ցեղից, ազգությունից և սոցիալական դրությունից, եղբայրներ են։ Նա գրում է. «Թշնամություն մի անեք մեկդ մյուսի հետ և մի սպանեք մեկդ մյուսիդ։ Դա արգելվում է սրբազան գրքով» (այաթ 168)։ Այսպիսով, նա դեմ էր դասակարգային պայքարին։

Լինելով հակահեղափոխական ուսմունք և միապետական կարգերի ջատագով, բահայիզմը Իրանի 1905—1911 թթ. սահմանադրական հեղափոխության շրջանում գործնականում դրսևորեց իր էությունը՝ ամեն կերպ ձգտելով խափանել այն։ Այդ կապակցությամբ պարսիկ հեղինակ Այաթին գրում է. «Նրանք (բահայիները— Հ. Փ.) գաղտնի կամ բացահայտ ներթափանցեցին սահմանադրականների շարքերը և նրանց մեծ վնաս հասցրին»[25]։

Հանդես գալով հեղափոխական գաղափարախոսության և շարժումների դեմ, Բահա-ուլլահը քարոզում էր. «Ոչ ոքի վայել չէ մարդկանց առջև խոսել, երբ ինքը քայլում է փողոցներով և հրապարակներով» (այաթ 257)։ Մի ուրիշ

---

[21] G. N. Curzon, Persia and the Persian Question, Vol. 1, London, 1892, p. 541.

[22] Տե՛ս Tarikh-i-Jadid, էջ 391, տողատակի 1 ծանոթությունը։

[23] Տե՛ս نقطة الكاف، ص مب

[24] „Кнтабе Акдес", „Священнейшая книга" современних бабидов"; текст, перевод, введение и приложения А. Г, Туманского, СПб., 1889.

[25] آیی کشف خیال، تهران، ۱۹۳۸، جلد اول، ص ۹

այաթում նա գրում է. «Ով գիտակցաբար կհրկիզի մի տուն, այրեք նրան։ Ով կանխամտածված կսպանի մեկին, սպանեք նրան։ Վերցրեք աստվածային օրենքները ուժեղ ու հզոր ձեռքերով և լքեցեք տգետ օրենքները» (այաթ 143)։

Բահա-ուլլահը քարոզում էր լրիվ վերացնել պետությունների սահմանները և առաջարկում էր աշխարհի բնակչության համար ընտրել մեկ լեզու և անիծում էր նրանց, ովքեր կհամարձակվեն հրաժարվել նրա պահանջներից։ Նա գրում է. «...առաջ մենք այաթներում առաջարկեցինք, որպեսզի գոյություն ունեցող լեզուներից և գրերից ընտրվի մեկը կամ ստեղծվեր նոր լեզու և դրանով ուսուցանվեն աշխարհի դպրոցական երեխաները, որպեսզի աշխարհը երևա միասնական, հարազատ և տիեզերքի մի մաս։ ...Դուք բոլորդ մի ծառի ճյուղեր եք և մի ճյուղի տերևներ։ Փառք չկա նրան, ով սիրում է հայրենիքը, բայց փառք նրան, ով սիրում է ամբողջ աշխարհը»[26]։

Բահայիզմի հիմնական դրույթների սոցիալ-քաղաքական էության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտահայտելով կոմպրադորական բուրժուազիայի շահերը, նա պաշտպանում է մասնավոր սեփականությունը, սոցիալական անհավասարությունը և ոչ միայն դեմ է ազգային-ազատագրական պայքարին, այլև քարոզում է գոյություն ունեցող իշխանություններին չդիմադրելու քաղաքականություն և հայրենազանցություն։ Այն ժամանակ, երբ Ասիայի ժողովուրդները զարթոնք էին ապրում և հանուն իրենց անկախության պայքարի ելնում հայրենադավ միապետական կարգերի և օտարերկրյա գաղութարարների դեմ, բահայիականները այդ բոլորին հակադրվելու համար ստեղծեցին կրոնական քողով շղարշված կոսմոպոլիտական մի ուսմունք, որը պետք է կազմալուծեր ազգային, քաղաքական և տնտեսական անկախության գաղափարները և ճանապարհ հարթեր հետագա զավթողական քաղաքականության հաղթանակի համար։

Բահայիզմը խեղաթյուրում է հասարակության պատմական զարգացման ամբողջ ընթացքը։ Այն գտնում է, որ հասարակությունը զարգանում է էվոլյուցիոն ճանապարհով։ Նման տեսության նպատակն է հրաժարվել դասակարգային պայքարից։ Ժխտելով հասարակության բաժանումը դասակարգերի, բահայիները դրանք ներկայացնում են որպես վերացական անհատների միություններ, որոնք իրարից տարբերվում են միայն բնավորությամբ։ Հետևաբար, պայքարը տեղի է ունենում ոչ թե դասակարգերի, այլ մարդկանց բնավորությունների միջև։ Այստեղից էլ բահայիզմի չհիմնավորված այն հետևությունը, թե դասակարգային պայքար չկա և չի կարող լինել։ Այդ ուսմունքի համաձայն մասնավոր սեփականության առկայությունը իբր թե պայմանավորված է բացառապես մարդու ձեռներեցությամբ, ընդունակությամբ և հմտությամբ։ Մասնավոր սեփականության գոյության նման մեկնաբանումը նպատակ ունի քողարկել շահագործման բուն էությունը։ Բահայիզմը դասակարգային հասարակությունը պատկերում է որպես մի համակարգ, որը տարերայնորեն, առանց հեղափոխության կհասնի սոցիալական հավասարության։ Բահայիականները ձգտում են արդարացնել այն, ինչ պատմությունն արդեն վաղուց հերքել էր և դատապարտված էր անխուսափելի կործանման[27]։

---

[26] „Китабе Акдес", стр. 82.

[27] Տե՛ս „The Bahai's Weekly", New York, 9, V, 1932.

Բահա-ուլլահի մահվանից հետո (1892 թ.) նրան փոխարինում է իր անդրանիկ որդին՝ Աբբաս էֆենդին, որն իրեն անվանեց «Աբդուլ-Բահա» (աստվածային փայլի ստրուկ)։

Նրա օրոք բահայիզմի կոսմոպոլիտական և պացիֆիստական բնույթը ավելի է խորանում։ Նա իր պատվիրաններում հորդորում էր հրաժարվել ազգային անկախության սկզբունքներից, առաջարկելով ստեղծել «համաշխարհային պառլամենտ», վերացնել երկրների միջև եղած սահմանները և ստեղծել «համաշխարհային մի լեզու»։

Պրոպագանդելով Բահա-ուլլահի վարդապետությունը, Աբդուլ-Բահան ժխտում էր հեղափոխության միջոցով հասարակության վերափոխման հնարավորությունը և առաջ քաշում միայն «ունեցվածքի հոժարակամ բաժանման ուսմունքը»[28]։

Բահայիզմի գաղափարախոսները ձգտում են իրենց ուսմունքը հակադրել սոցիալիզմին։ Նրանք աշխատում են այն ներկայացնել որպես սոցիալ-քաղաքական կատարյալ ուսմունք՝ ճամարտակելով աշխատանքի և կապիտալի շահերի «միասնության» և «համընկնելու» մասին։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բահայիզմի առաջնորդները սկսում են ավելի ակտիվորեն գործել։ Այս կապակցությամբ հետաքրքիր է «Մարդկային խարդիա» բահայիական հանդեսի հետևյալ հաղորդումը. «ԱՄՆ-ը աշխարհի միասնությանը հասնելու համար ունի՝

1 քաղաքական միասնություն, 2 գաղափարների ներդաշնակություն, 3 միասնական ազատություն, 4 միասնական կրոն, 5 համաշխարհային միասնական գիտություն, 6 միասնական լեզու, բոլոր դասակարգերի միավորում»[29]։

Բահայիզմը քարոզում է աշխարհի բոլոր սահմանների վերացում և ԱՄՆ-ի գլխավորությամբ «միասնական համաշխարհային պետության» ստեղծում, ինչպես նաև ազգային լեզուների վերացում և դրանց փոխարեն մի միասնական լեզվի ստեղծում՝ հանձին անգլոսաքսերենի։ Այդ ուսմունքի կողմնակիցները պրոպագանդում են այն միտքը, որ ամերիկյան ֆեդերացիան կարող է օրինակ հանդիսանալ համաշխարհային քաղաքական կազմակերպության համար։

Բահայիզմի կոսմոպոլիտական հայացքները իրենց գործնական դրսևորումն են գտնում արդի բուրժուական գաղափարախոսության մեջ, որը նույնպես հերքում է ազգային անկախության սկզբունքները։ Բելգիական աջ սոցիալիստների պարագլուխ Սպաակը, օրինակ, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի երկրորդ նստաշրջանում նշել է.

«Ես զարմացած և, անգամ, հիասթափված եմ, երբ տեսնում եմ, թե ինչպես այդ հին քաղաքական քողը, այդ հինը, թող ինձ թույլատրվի ասելու՝ այդ հետադիմական գաղափարը դուրս է մնացել նորաձևության գաղափարներից... Ես չեմ կարծում, որ երբևիցե հնարավոր լինի ունենալու գործնական և արդյունավետ միջազգային կազմակերպություն, որն ընդունակ լինի խաղալու իր դերը, եթե աշխարհի բոլոր երկրները՝ այս կազմակերպության անդամները,

---

[28] Абдул Беха, Письмо в Центральную организацию прочного мира, Париж, 1921, стр. 8.

[29] „The human Charter", New York, 1945, p. 66.

միահամուռ կերպով չհրաժարվեն ազգային անկախությունից և դեն չնետեն նրա բոլոր ատրիբուտները»[30]։

Այսպիսին է բահայիզմի հակազգային կոսմոպոլիտական էությունը, ուսմունք, որը կապիտալիզմի համընդհանուր ճգնաժամի դարաշրջանում արգելք է դարձել Արևելքի ժողովուրդների ազգային զարթոնքի և ազատագրության ուղու վրա։

БЕХАИЗМ И ЕГО РЕАКЦИОННАЯ СУЩНОСТЬ

О. Л. ПАХЛЕВАНЯН

Резюме

Одним из религиозных течений, которое можно назвать «еретическим» по отношению к мусульманской ортодксии, является бехаизм, возникший во второй половине прошлого века в персидском исламе.

Бехаизм отражал интересы и взгляды иранской компрадорской буржуазии, отличался отрицанием принципов национальной независимости и государственного суверенитета, пропагандой идеи создания «единого мирового государства» и «единого мирового языка». Бехаисты пользуются ими как орудием духовного разоружения народов Ближнего Востока и Африки, направленным на подавление их борьбы за национальную независимость.

---

[30] „Известия", 24, XII, 1952.